ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
2003Թ.
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան
Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ»
հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1210: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468
18003

Մեզ ժառանգած գանձի,
օ՜, վատնիչներ հետին...
Եղիշե Չարենց

Շաբաթ, 31 մարտի 2018թ.
№ 8 (466)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Մեղրու ազատ տնտեսական գոտի. իրականությո՞ւն, թե՞ միֆ

2017թ. դեկտեմբերի 15-ին վարչապետ Կարեն Կարապետյանն այցելեց Սյունիք եւ մասնակցեց Մեղրու ազատ տնտեսական գոտու բացման արարողությանը:

Մեղրու ազատ տնտեսական գոտու ստեղծման գաղափարն առաջ է քաշել ՀՀ կառավարությունը, գոտու կազմակերպիչ է ճանաչվել պետության կողմից հիմնադրված «Մեղրու ազատ տնտեսական գոտի» ՓԲԸ-ն:

Փաստորեն այդ օրը՝ դեկտեմբերի 15-ին, տրվեց գոտու մեկնարկը: Դա նաեւ ԱՏԳ-ի կառուցապատման առաջին փուլի ավարտի օրն էր (նախատեսվում էր կառուցել երկու փուլով): Ըստ պաշտոնական հաղորդման՝ առաջին փուլով ստեղծվել են նվազագույն անհրաժեշտ ենթակառուցվածքներ եւ նախապայմաններ՝ ԱՏԳ-ի աշխատանքը մեկնարկելու եւ ԱՏԳ-ում աշխատանքներ ծավալելու հետաքրքրություն ունեցող ընկերությունների հետ տեղում գործունեություն կազմակերպելու համար:

Այդ օրը, վարչապետի ներկայությամբ, ստորագրվեցին նաեւ ինչ-որ հուշագրեր:

Վարչապետն էլ հայտարարեց՝ **«... Տնտեսական գոտում նախատեսվում է ակտիվացնել Իրանի հետ սահմանային առեւտուրը, զբոսաշրջությունը, ակնկալվում է, որ իրանցի գործընկերները կտեղակայվեն այստեղ, որպեսզի դուրս գան ե՛ւ Եվրամիության, ե՛ւ ԵԱՏՄ շուկաներ: Ակնկալում ենք նաեւ, որ մեր գործընկերները**

էջ 5

Ասք Կապանի օդակայանի մասին

Ահա մեկ տարի է, ինչ Սյունիքի մարզպետը գիշեր-ցերեկ, գրեթե բոլոր հանդիպումներում, զրույցներում, նաեւ քարոզչական պաստառներով շեփորահարում-թմբկահարում է, որ 2018-ի ապրիլին գործարկվելու է Կապանի օդակայանը:

Խոստովանենք՝ օդակայանի վերագործարկման գաղափարն արժանի է դրվատանքի:

Բայց այդ ծրագրի նշանակությունը, ինչպես տեսնում ենք, փոքր-ինչ գերագնահատվում է ու անհարկի շահարկվում, ծառայեցվում մարզպետի չեղած վարկանիշի բարձրացմանը:

Իրականում (ուզենք-չուզենք) օդակայանի վերաբացման նշանակությունը դուրս չի գալիս Կապանի սահմաններից եւ այն համասյունիքյան իրադարձություն (ձեռնարկում) համարելու նվազագույն հիմքեր, ցավոք, չկան: Սիսիանից եւ Գորիսից դժվար թե հասնեն Կապան՝ Երեւան թռչելու համար: Մարզկենտրոն հասնելու փոխարեն, գրեթե նույն ժամանակամիջոցում (Թասի պես լեռնանցք չհաղթահարելով), կհասնեն մայրաքաղաք: Հյուսիսհարավ ճանապարհային ծրագրի իրագործման դեպքում էլ Մեղրիից ու Կապանից ավտոմեքենայով Երեւան հասնելը մի քանի անգամ ձեռնտու եւ հաճելի կդառնա:

էջ 4

Դատական հայց ընդդեմ Զանգեզուրի ՊՄԿ-ի

Մարտի 19-ին ՀՀ վարչական դատարանում տեղի ունեցավ Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի ընդլայնման ծրագրի գործով նախնական դատական նիստը: Հայցվոր «Էկոիրավունք» ՀԿ-ն դատարանից պահանջում է ոչ իրավաչափ ճանաչել 2016թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից Քաջարանի ընդլայնման ծրագրին տրված եզրակացության ՀՀ բնապահպանության նախարարի կողմից հաստատումը, ինչպես նաեւ անվավեր ճանաչել ընդերքի տեղամասի ընդլայնման եւ թույլտվության ժամկետի երկարացման վերաբերյալ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարի 2016թ. դեկտեմբերի 29-ի հրամանը:

Հիշեցնենք, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն թույլտվություն է ստացել Քաջարանի հանքավայրի արդյունահանման ծավալները 12.5 միլիոն տոննայից մինչեւ 22 միլիոն տոննա հասցնել:

Դատական նիստին հայցվոր կողմից ներկայացել էին «Էկոիրավունք» ՀԿ-ի նախագահ Արթուր Գրիգորյանը եւ փաստաբան Հայկ Ալումյանը: Պատասխանող կողմից՝ ՀՀ բնապահպանության եւ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների եւ բնական պաշարների նախարարությունների ներկայացուցիչները: Դատական նիստը նախագահում էր դատավոր Արգիշտի Ղազարյանը:

Նիստի սկզբին հայցվոր կողմը միջնորդություն ներկայացրեց, որպեսզի դատավորը թույլատրի լրագրողներին տեսագրել դատական նիստը: Պատասխանող կողմերը չառարկեցին, սակայն դատավորն արգելեց լրագրողներին տեսագրություն անել՝ պատճառաբանելով, որ «վարման մասով դա կկաշկանդի»: Երկրորդ միջնորդությունից հետո դատավորը թույլ տվեց լրագրողներին միայն ձայնագրություն իրականացնել:

Ծանոթանալով հայցի հիմքերին՝ դատարանը որոշեց ներգրավվել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ին որպես երրորդ կողմ: Դատական նիստը հետաձգվեց:

Լրագրողների հետ զրույցում փաստաբան Հայկ Ալումյանն ասաց, որ հայցի հիմքն ամբողջությամբ վերաբերում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի Արծվանիկի պոչամբարին: Ըստ նրա՝ բնապահպանական փորձաքննության ընթացքում բաց է թողնվել կարեւորագույն հարցերից մեկը՝ որտեղ են պահվելու արդյունահանված հանքաքարի պոչերն արտադրողականության ծավալի մեծացման ժամանակաշրջանում:

«Ակնհայտ է, որ Արծվանիկի պոչամբարի ծավալները բավարար չեն: Եզրակացության մեջ էլ ընդունել են, որ այդ հարցը գոյություն ունի, բայց դրա լուծումը թողել են ապագայի վրա», - ասաց Հայկ Ալումյանը:

Բնապահպանական եզրակացության մեջ այս հարցին անդրադարձ կա փորձաքննական պահանջներում,

էջ 2

Դպրական հայց ընդդեմ Ջանգեզուրի ՊՄԿ-ի

էջ 1

որտեղ նշված է. **«Մինչեւ պոչամբարի եւ լցակույտային տնտեսության գործածության ժամկետի ավարտն անհրաժեշտ է ՀՀ բնապահպանության նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել պոչերի, լցակույտերի հարցի լուծման ընտրված տարբերակը, դրա ընտրման հիմնավորումը, գումարային ազդեցությունները, ինչպես նաեւ պոչամբարի կոնսերվացման եւ խախտված ամբողջ տարածքների վերականգնման համապատասխան նախագծային փաստաթղթերը եւ ՇՄԱԳ հաշվետվությունը»:**

Հայկ Ալումյանի կարծիքով՝ պոչերի տեղակայման հարցի լուծումը պետք է տրվեր հենց նախագծում, իսկ լուծման բացակայությունը հիմք հանդիսանար այդ նախագիծը չհաստատելու համար:

«Առաջին անգամ մենք դրել ենք մի պահանջ, որը մինչ այս չի եղել: Թեղուտի հանքի դեպքում մենք պահանջում էինք անվավեր ճանաչել բնապահպանական փորձաքննական եզրակացությունը: Գործը քննվեց, եզրակացությունը վիճարկելու իրավունքը ոչ ոք կասկածի տակ չդրեց: Հետո մենք Ամուլսարի հանքի գործով պահանջեցինք անվավեր ճանաչել բնապահպանական եզրակացությունը: Դատարանն ասաց, որ այն ընդհանրապես չի կարող վիճարկվել, որովհետեւ վարչական ակտ չէ, ընդամենը փորձագետի

Մհեր Պոլոսկով. Ջանգեզուրի ՊՄԿ-ի տնօրեն

եզրակացություն է: Այս դեպքում մենք կիրառեցինք այլ մեթոդ. մենք ոչ թե եզրակացությունը վիճարկեցինք, այլ եզրակացությունը հաստատելու վերաբերյալ նախարարի գործողությունը ճանաչել ոչ իրավաչափ», - մեկնաբանեց Հայկ Ալումյանը:

«Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին տրվել է 25 տարով թույլտվություն արդյունահանել 22 միլիոն տոննա/տարեկան հանքաքար: Արծվանիկի պոչամբարն այդ քանակությամբ թափոն չի կարող տեղակայել, իրենք էլ են ասում, որ պոչամբարը կբավարարի 12 տարվա համար: Բայց թույլտվությունը տրվել է 25 տարվա համար, իսկ ՇՄԱԳ օրենքը պահանջում է, որպեսզի գնահատվի գումարային ազդեցությունն ամբողջ ժամանակահատվածի համար: Նախարարն իրավունք չուներ հաստատել այդ եզրակացությունը, որովհետեւ այն տրվել է օրենքի խախտումով», - ասաց «Էկոհրավունք» ՀԿ-ի նախագահ Արթուր Գրիգորյանը:

Հիշեցնենք, որ Արծվանիկի պոչամբարի ընդլայնման համար 2015թ. բացառիկ գերակա շահ ճանաչվեցին Սյունիքի մարզի Արծվանիկ, Սեւաքար, Աճանան, Չափնի եւ Սյունիք գյուղերի 491.8093 հեկտար հողերի նկատմամբ:

Նշենք, որ «Թաթսթոուն» ՍՊԸ-ի Լիճքի պղնձի հանքավայրի շահագործման նախագծով նախատեսվում է Լիճքի հանքավայրի արդյունահանած հանքաքարը եւս տեղափոխել «Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի հարստացուցիչ ֆաբրիկա: Սա նշանակում է, որ այս հանքավայրի արդյունաբերական պոչերն էլ են լցվելու Արծվանիկի պոչամբար:

ecolur.org
20 մարտի 2018թ.

Արծվանիկի պոչամբարի ռեսուրսները սահմանափակ են

Սյունիքի մարզում մետաղական հանքերի 11 պոչամբար կա, որոնցից 7-ը գործող է, 3-ը՝ փակված, 1-ը՝չգործող, բայց եւ չփակված: Այս ցանկում է Հայաստանի ամենամեծ՝ Արծվանիկի պոչամբարը, որը պատկանում է Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին: Համաձայն գիտական տվյալների՝(«Հայաստանի Հանրապետության հարստապոչերի հետ կապված առաջնահերթ խնդիրները» գիտական աշխատություն, հեղինակներ՝ Ռ.Ս Մովսեյանը, Հ.Ի. Մովսիսյան, Երեւանի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, Երեւան, 2014), պոչամբարի փաստացի ծավալը կազմում է 270 միլիոն խմ, իսկ 300 միլիոնը՝ նախագծային ծավալն է:

Խնդիրն այն է, թե որքանով կբավականացնի Արծվանիկի պոչամբարի ռեսուրսը տարեկան 22 միլիոն տոննա հանքաքարի ընդլայնված արտադրության համար, որն իրականացնում է Ջանգեզուրի կոմբինատը:

Հիշեցնենք, որ նման մասշտաբի դեպքում Արծվանիկի պոչամբար տարեկան պետք է լցվի 21 միլիոն 809.2 հազար տոննա պոչ: Եթե հաշվի առնենք, որ պոչամբարն արդեն լցված է 212 միլիոն տոննայով, ապա նրա ռեսուրսը կբավականացնի ընդամենը մի քանի տարի: Կոմբինատը պնդում է, որ ռեսուրսը կբավականացնի 25 տարի, քանի որ հաշվարկված ծավալը կազմում է 325 միլիոն խմ:

ՀՀ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի գլխավորությամբ բնապահպանության նախարարության պատվիրակու-

թյան՝ այդ թվում լրագրողների եւ էկոլոգների Սյունիքի մարզ այցելության ժամանակ մարզպետ Վահե Հակոբյանը հայտնեց հետեւյալ կարծիքը պոչամբարի ռեսուրսի վերաբերյալ. **«Արծվանիկի պոչամբարի հագեցվածությունը մինչեւ 70 տոկոս է: Այնտեղ մշտապես աշխատանքները տարվում են, եւ այդ պոչամբարը մոտ 20-25 տարվա ռեսուրս դեռ ունի՝ վաղուց 2 պոչամբար ռեկուլտիվացվել է, եւ մենք անընդհատ քայլեր ենք ձեռնարկում: Ռեկուլտիվացված պոչամբարների մասով այսօր մենք վարում ենք բանակցություններ եւ քննարկում ենք դրանց վերամշակումը՝ այսինքն, կուտակված մետաղների վերամշակումը: Դա չափազանց մեծ եւ ծախսատար ծրագիր է: Դրա մասին մենք մեր եվրոպացի գործընկերների հետ հիմա խոսում ենք»:**

Եթե Արծվանիկի պոչամբարը լցվի նախատեսված տեմպերով, ապա ամբողջ շրջանը կբախվի լուրջ խնդրի հետ: 2015թ. կառավարության որոշում ընդունվեց 491.8093 հեկտար հող Արծվանիկ, Աճանան, Սյունիք, Չապնի, եւ Սեւաքար համայնքներից օտարելու մասին: Չնայած ընկերության հավաստիացումներին, որ պոչամբարի սահմանները չեն հասնի կառավարության կողմից օտարված տարածքներին, հայտնի է, որ պոչամբարի 1 հեկտարը կարող է աղտոտել 10 անգամ ավելի տարածք:

Բացի Արծվանիկի պոչամբարից Ջանգեզուրի կոմբինատի հաշվեկշռում են ավելի փոքր ծավալներ ունեցող Ողջիի, Փխրուտի եւ Դարազամի պոչամբարները:

4.6 միլիոն խմ փաստացի ծավալով Գեղանուշի պոչամբարը պատկանում է Կապանի լեռնահարստացուցիչ կոմբինատին:

Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատը կիրճերում օգտագործում է միանգամից 3 պոչամբար՝ 1, 2, 3 համարներով, 47.2 միլիոն տոննա ընդհանուր ծավալով:

Առկա է եվս մեկ պոչամբար անհասկանալի կարգավիճակով՝ ոչ գործում է, ոչ փակված է: Դա Դաստակերտի պոչամբարն է: Նրա փաստացի ծավալը 1.5 միլիոն խմ է:

Մեր կարծիքով նման կարգավիճակը նշանակում է , որ մինչ օրս ոչ ոք պատասխանատվություն չի կրում Դաստակերտի պոչամբարի անվտանգության համար:

ecolur.org
26 մարտի 2018թ.

Իտալական ընկերությունն ուսումնասիրություն կիրականացնի Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածում

Իտալական «Անաս» միջազգային խմբի մեջ ընդգրկված «Anas International» ընկերությունն ուսումնասիրություններ կիրականացնի՝ Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 4-ի Սիսիան-Քաջարան հատվածը պետություն-մասնավոր հատված ձեւաչափով կառուցման եւ շահագործման նպատակահարմարության գնահատման նպատակով:

ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունում նախարարության եւ ընկերության ներկայացուցիչները մարտի 14-ին ստորագրեցին շրջանակային համաձայնագիր, որում ամրագրված են իրականացվելիք ուսումնասիրությունների շրջանակը եւ ժամանակացույցը:

Հայկական կողմից այն վավերացրեց «Տրանսպորտային ծրագրերի իրականացման կազմակերպություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի պաշտոնակատար Վարդան Կարապետյանը, իտալական կողմից՝ «Անաս Ինֆերնեյշնլ» ընկերության տնօրեն Բերնարդո Մագրին:

Համաձայնագրի ստորագրումը տեղի ունեցավ ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանի եւ «Անաս» խմբի տնօրեն Ջիանի Վիտորիո Արմանիի ներկայությամբ:

Ողջունելով իտալական շինարարական կազմակերպության հետաքրքրությունը Հայաստանում իրականացվող ենթակառուցվածքային ծրագրերի առնչությամբ՝ նախարարը կարեւորեց Հայաստանի համար ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող ճանապարհի կառուցումը, ընդգծեց ուսումնասիրությունները բարձր որակով իրականացնելու անհրաժեշտությունը:

Ջիանի Վիտորիո Արմանին ներկայացրեց ընկերության գործունեությունը, նշեց, որ ընկերությունը «smart» տեխնոլոգիաներով ճանապարհների կառուցման առաջատարն է Իտալիայում, ուր տնօրինում է ավելի քան 30 հազար կմ ճանապարհներ: Ընկերության գործունեությունը չի սահմանափակվում Իտալիայով. այն ենթակառուցվածքային ծրագրեր է իրականացրել տարբեր երկրներում: Նա առանձնակի կարեւորեց ընկերության փորձառությունը ճանապարհաշինության ոլորտում, այդ թվում՝ թունելների եւ կամուրջների շինարարության գործում: Ջիանի Վիտորիո Արմանին ընդգծեց, որ Հայաստանի հյուսիսը հարավին կապող ճանապարհը ոչ միայն Հայաստանի, այլեւ տարածաշրջանի համար ունի ռազմավարական կարեւոր նշանակություն:

Նախարար Վահան Մարտիրոսյանը, կարեւորելով ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը ճանապարհաշինության ոլորտում, վստահություն հայտնեց, որ ուսումնասիրությունների արդյունքում ձեւավորվելիք առաջարկում տեղ կգտնի միջազգային լավագույն փորձի կիրառումը:

ՀՀ տրանսպորտի, կապի
եւ տեղեկատվական
տեխնոլոգիաների նախարարության
լրատվական ծառայություն

Սիսիանի ԲԿ-ի փնօրենի «փութեռանդ ջանքերով» հիմնահատակ ավերվեց Սիսիանի հիվանդանոցը

Բաց նամակ ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանին

Հարգելի պարոն վարչապետ, 2018թ. մարտի 7-ին, Սյունիքի մարզի Գորիս քաղաքում, խորհրդակցության ժամանակ մարզպետ Վահե Հակոբյանը ամփոփեց 2017թ. արդյունքները, թվերի վերծանումը թողնենք մեկ ուրիշ անգամ:

Շուրջ մեկ տարի է, ինչ անընդհատ խոսվում ու բարձրաձայնվում է օդանավակայանի եւ օդանավի մասին, ներկայացվում են թվեր, որոնք ոչ մի կապ չունեն իրականության հետ, այս պահին, ոչ օդանավ կա, ոչ էլ օդանավակայանում որեւէ տեղաշարժ: Այս ողջ ընթացքում «հաջողել» են մի քանի երկաթյա ձողեր տեղադրել:

Մեզ՝ սյունեցիներիս, առավելապես մտահոգում է մարզի առողջապահության ոլորտը: Այն դեպքում, երբ օր օրի դատարկվում է Սյունիքը, գործազրկության ահասասուռ թվերի պայմաններում, չգիտես ինչ հնարքներով, առողջապահության ոլորտում վճարովի ծառայությունները մեկ տարվա ընթացքում ավելացել է 2.6 անգամ: 2016թ. 151.2 մլն դրամի փոխարեն 2017թ. այդ թիվը կազմել է 402.4 մլն դրամ: Զավեշտն այն է, որ 2018թ. նախատեսվում է մատուցել 482.0 մլն դրամի առողջապահական վճարովի ծառայություն:

Այստեղից հետեւություն. կամ մարզում տիրող լարված ու անառողջ մթնոլորտի արդյունքում է կտրուկ ավելացել հիվանդների թիվը, կամ էլ այդ թվերն իրականության հետ որեւէ կապ չունեն, ու դա Քաջարանի ՊՄԿ-ի հերթական միֆն է, ինչպես ասենք օդանավակայանի մասին հանրապետությունում շրջող «ուրվականը»:

Կառավարության ղեկավարի վերահսկողության համապատասխան ծառայությունը պետք է, որ խոշորացույցի տակ առնի եւ ամենայն պատասխանատվությամբ ուսումնասիրի մի մարզի «զարգացման» թվերը, որը բնակավայր լինելուց բացի նաեւ սահմանապահ առաքելություն է իրականացնում, ունի հերոսական անցյալ ու ներկա:

Այստեղ զարմանալին այն է, որ Դուք, պարոն վարչապետ, դրական գնահատեցիք առողջապահության ոլորտի աշխատանքը՝ ոգեւորվելով ներկայացված, բայց իրականության հետ աղերս չունեցող թվերից՝ մոռանալով անդրադառնալ, որ մեկ տարվա ընթացքում մարզպետ Վահե Հակոբյանի կողմից նշանակված Սիսիանի ԲԿ-ի տնօրեն Անուշ Ներսիսյանի «փութեռանդ ջանքերով» հիմնահատակ ավերվեց եւ անգործության մատնվեց շուրջ 1 դար սիսիանցիներին խոնարհաբար ծառայած Սիսիանի հիվանդանոցը: Երբ արդեն իսկ գործազուրկ են դարձել շուրջ 30 բուժաշխատողներ, նաեւ սպասարկման անձնակազմից աշխատակիցներ, իսկ առաջիկայում այդ թիվը կհասնի 140-150-ի: Հիվանդանոց, որտեղ չկա անգամ առաջին անհրաժեշտության դեղորայք: Զարմանալի չէր, երբ մարտի 8-ին Սիսիանի քաղաքապետը ծաղիկներ էր ուղարկել հիվանդանոց, չգտնվեց գեթ մեկ ծննդկան, ում կտրամադրվեին փնջերը: Այս մեկ իրական-փաստը բավարար է՝ ներկայացնելու այն տխուր ու հուսալքված վիճակը, որ տիրում է Սիսիանի հիվանդանոցում:

Գորիս քաղաքում ժամանակակից սրտաբանական կենտրոնի առկայության դեպքում, նախատեսվում է Գորիսի քաղաքային հիվանդանոցում նոր ինվազիվ կարդիոլոգիայի բաժանմունք բացել, մինչդեռ Սիսիանում գործող միակ հիվանդանոցը հասցվել է անդունդի եզրին ու դրա համար ոչ ոք պատասխանատվություն չի կրում: Ինչ որ անհեռատես քաղաքականության արդյունքում Սիսիանի հիվանդանոցը միավորվել է շուրջ 7 կմ հեռավարության վրա գործող Աղիտու գյուղում գտնվող զինվորական հոսպիտալին:

Սույն նամակով դիմում ենք Ձեզ՝ Ձեր ուշադրությունը հրավիրելով Սիսիանի ԲԿ-ում տիրող իրավիճակին, եւ բավական է, որ մարդկանց իրական կյանքը թողած, նրանց կերակրեք անհայտ ծագումնաբանությամբ սին թվերով, որոնք մի օր փուչիկի էֆեկտով պայթելու են՝ օդում՝ տարածելով ողջ ճշմարտությունը:

nt.am
22-03-2018
Արայիկ Մանուչարյան
Աննա Մուկուչյան
Մանվել Գրիգորյան

«Շակալի» հոտառություն ունեցող Արթուրը եւ «լուռ ու մունջ» Ավետը կործանում են Սիսիանը.

տեղաբնակներն ահազանգում են անհետացող համայնքի մասին

2016թ. ՏԻՄ ընտրությունների ժամանակ «գործի դնելով» իշխանական լծակներն ու զգալի ֆինանսներ «խաղացնելով» Սիսիանի համայնքի ղեկավար ընտրվեց Արթուր Սարգսյանը:

Վերջինս օգտագործելով համայնքի բյուջեով իրեն փոխանցված 17 մլն դրամը, հաջողեց կոսմետիկ որոշակի փոփոխություններ իրականացնել քաղաքում՝ ցույց տալով, թե իբր իշխանության է եկել Սիսիանում արմատական բարեփոխումներ անելու նպատակով:

Սակայն, ինչպես ցույց տվեց հետագան, այդ ամենը կարճատեւ ուրախություն էր տեղաբնակների համար: Արթուրի հեռահար նպատակը մեկն էր՝ ամեն գնով շահել սիսիանցիների վստահությունը, որ եղբայրն Աժ պատգամավորի կոստյում

Ավետ Սարգսյան (Աժ պատգամավոր)

հագնի, ինչն էլ պսակվեց հաջողությամբ: Քաղաքականությունից կմ-ով հեռու, ձկան պես լուռ ու մունջ, «ավանակի» պես հնազանդ, շինարար ախպերը համալրեց երեսփոխանների շարքերը: Զարմանալին ամենեւին էլ այն չէ, որ Ավետն Աժ-ում է, այլ այն, որ Արթուրը, որպես Սիսիանի ղեկավարման իր գլխավոր ձեռքբերում (ինչպես այդ մասին նշում է գովազդային նյութում) համարում է Սիսիանից պատգամավոր ունենալու հանգամանքը: Առանց անհարմար զգալու, որ մեկ տարվա ընթացքում այդպես էլ սիսիանցի՝ Սյունիք ներկայացնող պատգամավորը, Աժ-ում չի արտաբերել որեւէ բառ, հանդես չի եկել որեւէ նախաձեռնությամբ: Ավետին ճանաչողները լավ գիտեն՝ հենց այդպես էլ գլորվելու են տարիները՝ նրա կենսագրության մեջ ամրագրելով պատգամավոր լինելու իրողությունը:

Արթուրի ղեկավարման փուչիկը պայթեց, երբ իրենից հետո հարեւան Գորիսում համայնքի ղեկավար ընտրվեց ընդամենը 24-ամյա անփորձ մի երիտասարդ, ով սակայն, շատ կարճ ժամանակում հասցրեց այնքան մնայուն եւ երեւացող աշխատանք իրականացնել, այնպես համախմբել գորիսեցիներին իր շուրջը, որը զարմացրեց անգամ «աղվեսի» խորամանկություն եւ «շակալի» հոտառություն ունեցող Արթուրին:

2017թ.-ին, Հայաստանում կործանարար քաղաքականություն իրականացնողների ամենազոր ձեռքը Սիսիան էլ հասավ, տարածաշրջանի 32 բնակավայր միավորելով ձեւավորեցին Սիսիանի խոշորացված համայնքը: Այս ընտրությունների ժամանակ էլ, գործի դնելով ճշմարտությունների սեփական «մեքենան», խաղից դուրս թողնելով Արթուրի միակ մրցակցին՝ խոշորացված համայնքի աթոռատերը մնաց անփոփոխ:

Նախընտրական շրջանում Արթուրի կողմից հնչեցված բոլոր խոստումներն աբսուրդի ժանրից էին, քանի որ Արթուր եւ Ավետ Սարգսյանները մեկ գերխնդիր ունեն, իրենց հայրիկի փորձը (1999-2008թթ. Սիսիան համայնքի ղեկավար Լավրենտի Սարգսյան), ով այդ տարիներին տիրացավ Սիսիան քաղաքի վարչական անշարժ գույքի եւ հողատարածքների գերակշիռ մեծամասնությանը, նույնությամբ շարունակել խոշորացված համայնքում, ինչպես նաեւ իրենց ծանոթ-բարեկամներով «զավթել» համայնքային եւ բյուջետային բոլոր հաստիքները:

Բերենք մի քանի օրինակ: Նախ՝ երկու եղբայրների լուռ համաձայնությամբ այսօր անգործության է մատնվել Սիսիանի հիվանդանոցը՝ գործազուրկ դարձնելով հարյուրավոր սիսիանցիների: Քաղաքապետարանում եւ ենթակա հիմնարկ-ձեռնարկություններում պաշտոնների են նշանակվում մարդիկ, ովքեր անգամ կրթություն չունեն: Հաշվեհարդար են տեսնում բոլոր նրանց հետ, ովքեր ընտրությունների ժամանակ իրենց կողքին չեն եղել: Վերջերս աշխատանքից ազատեցին Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնի հաշվապահ Բենիկ Հակոբջանյանին (այդ պաշտոնն այսուհետ կզբաղեցնի քաղաքապետի տեղակալի կինը), ով շատ ավելի մեծ արժանիքներ, հարգանք ու վաստակ ունի Սիսիանում, քան քաղաքապետի երեսփոխան եղբայրը:

Սիսիանի թիվ 1 նախակրթարանի տնօրենն ազատվեց, այդտեղ աշխատելու նշանակվեց Արթուրի մանկության ընկերոջ կինը: Քաղաքապետարանում աշխատանքի են ընդունվում մարդիկ, որոնց միակ «առավելությունը» ընկեր-բարեկամ լինելն է:

Սիսիանյան չինովնիկները եւ նրա նազիր-վեզիրները որպես լրջագույն հաջողություն նշում են Սիսիանի մարզադաշտի կառուցումը՝ մոռանալով, որ այն իրականացվում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախաձեռնությամբ ու ֆինանսական միջոցներով (նմանօրինակ մարզադաշտեր են կառուցվում հանրապետության մի շարք քաղաքներում): Մինչդեռ պարզվում է, որ այդ մարզադաշտի կառուցման համար համայնքային բյուջեից ծախսվել է շուրջ 750 մլն դրամ, այս հարցի քննությունը թողնում ենք իրավապահ մարմինների քննությանը:

Սիսական գնդի հրամանատարներին սիսիանցիները, եւ ոչ միայն նրանք, միշտ էլ վերաբերվել են խորին հարգանքով, այսօր հիասթափություն են ապրում հաղթանակած ու հերոսական ուղի անցած գնդի ներկայիս հրամանատարի պահվածքից, ով որպես իր նշանակման փոխհատուցում, առավոտից-երեկո ուղեկցում է Արթուրին, ինչպես մշակութային, այնպես էլ անձնական միջոցառումների ժամանակ, նույնը կարելի է ասել նաեւ Ոստիկանության Սիսիանի բաժնի ղեկավարի մասին: Բաժին, որտեղ միայն վերջին տարվա ընթացքում առնվազն 2 տասնյակ ծառայողներ վարչական եւ քրեական տույժերի են ենթարկվել: Տպավորություն է, թե ոստիկանապետի գերխնդիրն Արթուրի անձնական եւ վերանձնային շահերին ծառայելն է:

Սարգսյան եղբայրներն իրենց կարգավիճակից զարմացած վայելում են կյանքը, փոխարենն անտերության են մատնվել

Արթուր Սարգսյան (Սիսիան համայնքի ղեկավար)

եւ դատարկվում են խոշորացված համայնքի բնակավայրերը, քանի որ ընտրություններից հետո այդպես էլ համայնքի ղեկավարն անհասանելի է իրենց համար, իսկ նրա կողմից նշանակված վարչական ղեկավարները զբաղված են իրենց նախկին կեղտերը կոծկելով: Ցանկացած լրատվամիջոց կարող է ուսումնասիրել Սիսիանի ներկա վիճակը եւ կտեսնի, որ բացի Սիսիանի ավանդույթներով լեցուն մշակութային օջախներից, մնացած ոլորտներում սկիզբ է դրվել Սիսիանի կործանմանը, եւ ինչպես ժողովուրդն է ասում. «Հասել է Սիսիանի վերջի սկիզբը»:

nt.am
28-03-2018
Գարեգին Հարությունյան

Ասք Կապանի օդակայանի մասին

էջ 1

Սուտ է կիսագրագետ տղեկների պնդումը, թե իբր ներդրողները Սյունիքից խուսափում են հեռավորության պատճառով, թե իբր օդային երթուղին կխթանի ներդրողներին՝ ավելի հաճույքով առնչվելու Սյունիքին:

Մեր հանրապետությունն այնքան փոքր է, որ հարավից-հյուսիս կարելի է հասնել ժամերի ընթացքում եւ Երեւանից Կապան կամ Մեղրի հասնելը հավելյալ ջանք կամ խիզախություն չի պահանջում որեւէ նորմալ մարդու համար:

Օդակայանի վերագործարկման կարեւորությունն ավելի ընդգծելու համար հիմա էլ նոր դրույթ է շրջանառության մեջ դրվել՝ **«մարզից հիվանդին շտապ տեղափոխելու համար օդանավը տալիս է հնարավորություն՝ հոգալ ժողովրդի առողջական խնդիրները»:**

Նախ՝ օդանավով աշխարհի ոչ մի երկրում ժողովրդի առողջական խնդիրներ չեն լուծում, դա անհեթեթ եւ շինծու տրամաբանություն է, բայց դա՝ մի կողմ:

Ըստ այդ «տեսության» հեղինակների՝ Երեւանում կայանած ինքնաթիռը, որ Երեւան-Կապան-Երեւան ամենօրյա թռիչքներ չի ունենալու, իմանալով, որ Կապանում մի ծանր հիվանդ կա, անմիջապես թռչելու է Կապան՝ նրան մայրաքաղաք տեղափոխելու համար: Մաշալա՞… Բա Սիսիանի, Գորիսի, Մեղրու հիվանդների՞ խնդիրը:

Իսկ ավելի լուրջ՝ հանրության լայն զանգվածների համար ոչ մատչելի սակագների պայմաններում Երեւան-Կապան-Երեւան ինքնաթիռային թռիչքը ձեռնտու է լինելու հատկապես Երեւանից բերված ու Քաջարանի կոմբինատում եւ Սյունիքի մարզպետարանում ներդրված ձրիակերների բույլին:

Դա ձեռնտու է լինելու մարզպետին. ուղղաթիռային մեկ թռիչքի համար ներկայումս վճարում է մոտ 700 հազար դրամ (միակողմանի), իսկ ինքնաթիռային թռիչքի դեպքում (միակողմանի) կվճարի 400 հազար դրամ:

Բացի միջոցների խնայողությունից, որն այս դեպքում ամենեւին էլ կարեւոր չէ նրա համար, լեգիտիմացվելու է աշխատանքի հաճախելու վահեհակոբյանական կերպը:

Ամեն դեպքում գնահատելի կլիներ, եթե Կապանի շրջանի բնակչության գոնե 10 տոկոսը դառնար այդ ծրագրի շահառու:

Չի կարելի չնկատել, որ Կապանի օդակայանի վերաբացման ծրագիրն էն գլխից դարձավ պրոպագանդայի նյութ: Ի սկզբանե կարեւորվեց ոչ թե բուն աշխատանքների ընթացքը, այլ պրոպագանդան, տեսիլը, պատրանքը:

Ի՞նչ խնդիրներ են դրված պրոպագանդիստների առջեւ:

Նախ՝ փորձ է արվում պատրանք ստեղծել, թե Վահե Հակոբյանն այնքան էլ անգործունակ ու անբան չէ, որ նա աշխատում է նաեւ:

Այնուհետեւ՝ փորձ է արվում հանրության մեջ սերմանել տեսակետ, որ ասպատակների կամ գաստարբայտերների խումբը դեռ երկար է Սյունիքում գաղութատիրություն անելու:

Նաեւ փորձ է արվել ու արվում՝ ցույց տալու, որ օրվա մարզպետը մտահոգված է սյունիքյան խնդիրներով, լուծում է մարզի առջեւ ծառացած հույժ կարեւոր եւ հրատապ մի հարց:

Ասենք, սակայն, որ պրոպագանդիստական այդ հնարքները լուրջ ընկալումի չեն արժանանում:

Հիշենք գիտական հայտնի ճշմարտությունը՝ ամեն մի գործի կամ իրադարձության անհրաժեշտություն ու հրատապություն պետք է դիտարկել կոնկրետ ժամանակի մեջ, ժամանակից դուրս ոչինչ չկա բնության մեջ:

Ուրեմն, եթե օդակայանի վերագործարկման գաղափարը դիտարկում ենք մեր օրերում Կապանի առջեւ ծառացած հիմնախնդիրների ֆոնի վրա, ապա դրա անհրաժեշտությունն ինքնըստինքյան հետ է մղվում եւ որեւէ կերպ չի տեղավորվում առաջնահերթ խնդիրների մեջ: Կապանում այնքան շատ ու հրատապ հարցեր կան լուծման կարոտ, որոնցից ուղղակիորեն կախված է տեղի բնակչության կյանքի ու առողջության անվտանգությունը, բայց ասպատակները խնամքով շրջանցում են դրանք:

Պրոպագանդայի ընթացքում աստիճանաբար ու հիմնովին սրբագրվում է նաեւ վաղօրոք հայտարարված ծրագիրը՝ պայմանավորված քաղաքական կոնյունկտուրայով:

Մի քանի անգամ փոխվեց օդակայանի վերագործարկման ժամկետը՝ ապրիլից տեղափոխվեց հուլիս:

Ասում էին՝ երթուղին լինելու է Կապան-Երեւան-Կապան, հիմա ասում են՝ Երեւան-Կապան-Երեւան:

Ասում էին՝ լինելու է ամենօրյա չվերթ, հիմա ասում են՝ Կապանի օդակայանից կանոնավոր թռիչքներ չեն նախատեսվում:

Ինչեւէ, օդակայանը պատրաստվում է վերագործարկման, ու բոլորս սպասում ենք հաճելի այդ իրադարձությանը:

Օդակայանի թեման, սակայն, վերջին օրերին հայտնվել է ֆինանսական ինչ-ինչ անհասկանալի-անբացատրելի սխեմաների կիզակետում: Կրակը մարելու համար ոտքի են հանվել մայրաքաղաքային հայտնի լրատվամիջոցներ եւս, մինչդեռ առկա հարցերից գոնե մեկի պատասխանը չի տրվել դեռեւս, ու փոքր-ինչ անգամ չի նահանջել տարակույսների մշուշը:

2017թ. հոկտեմբերին մարզպետը հայտարարեց՝ Կապանի օդակայանում ընթացիկ տարում ներդրվել է 8 մլն դոլար, որից՝ 2.5-ը՝ բուն օդակայանի աշխատանքների վրա, 5.5-ը՝ օդանավի ձեռք բերման վրա:

Ընդունենք, որ 2017-ին իսկապես 8 մլն դոլար է ներդրվել Կապանի օդակայանում, թեեւ դա ներդրում կոչելու հարցում գրեթե բոլոր տնտեսագետները ձեռնպահ են:

2018-ի մարտի 7-ին, երբ վարչապետ Կարեն Կարապետյանը ժամանեց Սյունիք, մարզպետը հայտարարեց, որ ընթացիկ տարում 4.5 մլրդ դրամ է ներդրվելու Կապանի օդակայանում:

Առաջին հարցը, որ ծագեց դրանից հետո, հետեւյալն է՝ որքա՞ն գումար ենք դրել (դնում) Կապանի օդակայանում՝ ո՞ւթ մլն դոլար, թե՞ 16 մլն դոլար:

Հարցը կարելի է եւ այսպես ձեւակերպել՝ իսկապե՞ս 2017-ին Կապանի օդակայանում դրվել է 8 մլն դոլար, ինչի մասին մարզպետը զեկուցել է հանրությանը:

Իսկ միգուցե 2017-ին դրված 8 մլն դոլարը (եթե, իհարկե, դրվել է) հիմա էլ ցույց ենք տալիս իբրեւ ներդրում 2018-ի ընթացքում՝ դրամական փոխարժեքով՝ 4.5 մլրդ դրամ:

Բայց եկեք 5.5 մլն դոլարը մի կողմ թողնենք եւ գնանք Կապանի օդակայան՝ տեսնելու, համոզվելու, թե 2.5 մլն դոլարով ի՞նչ աշխատանքներ են կատարվել այնտեղ 2017-ի ընթացքում եւ ընթացիկ տարվա 1-ին եռամսյակում:

Մի սպասասրահի կառուցում, որի ավարտը դեռ չի երեւում (լուսանկարը՝ սույն հրապարակման մեջ), խորհրդային տարիներին՝ Ռաֆիկ Մինասյանի նախաձեռնությամբ բավականին որակով կառուցված թռիչքուղու առանձին հատվածները նոր-նոր կարկատելու փորձ, թռիչքուղուն կից անվտանգության գոտու հողային հարթ շերտի անհարկի վերահարթեցում…

Եվ այդ ամենը, ըստ մասնագետների, հազիվ թե պահանջած լինի 100 հազար դոլարին համարժեք գումար:

Մասնագետների պնդումը, սակայն, հաճույքով կիերքենք, եթե լիազորված որեւէ մեկը հանրությանը ներկայացնի, թե 2017-ի ընթացքում, այնուամենայնիվ, ինչ կոնկրետ գործեր են կատարվել օդակայանում, որի վրա իբր ծախսվել է 2.5 մլն դոլար:

Հիմա՝ ինքնաթիռի մասին…

Հետեւելով վահեհակոբյանական ծանծաղ պրոպագանդային՝ տպավորություն ենք ստանում, որ օդակայանի վերագործարկման գաղափարի անվերջ տարփողումն ավելի շատ արվում է ինչ-որ ինքնաթիռի ձեռքբերումն արդարացնելու, հիմնավորելու համար:

Եվ հերթական պարզագույն հարցն է ծագում՝ Կապանի օդակայանի վերագործարկումն իրո՞ք պայմանավորված է սեփական ինքնաթիռ ունենալով:

Ասել եւ պնդում ենք՝ այլ բան է օդակայան շահագործել, մեկ այլ բան՝ այդ օդակայանից բեռներ կամ ուղեւորներ փոխադրել:

Այնպես որ՝ Կապանի օդակայանի գործարկումն ու սեփական ինքնաթիռի ձեռքբերումն իրար հետ կապ չունեցող գործարքներ կամ ձեռնարկումներ են:

Ասվածն ավելի պարզեցնենք՝ եթե իսկապես Երեւան-Կապան-Երեւան օդային երթուղին պահանջված է, ապա ուրեմն բիզնեսի առումով գրավիչ է, շահեկան է, ուստի եւ ցանկացած փոխադրող մեծագույն հաճույքով կստանձնի այդ երթուղու սպասարկումը:

Իսկ եթե երթուղին պահանջված չէ, եթե դրա կարիքն այս պահին չկա, եթե անհրաժեշտ քանակությամբ ուղեւորներ չկան, ուրեմն եւ վնասով աշխատող երթուղին որեւէ մեկին չի հետաքրքրի: Անգամ սեփական ինքնաթիռ ունենալու դեպքում տվյալ երթուղու շահագործումն անիմաստ կդառնա:

Այնպես որ՝ ե՛ւ շահութաբեր, ե՛ւ ոչ շահութաբեր լինելու պարագայում, սեփական ինքնաթիռ ունենալն ածանցյալ հարց է, եթե ոչ անիմաստ:

Հետեւաբար՝ ինչո՞ւ անպայման 5.5 մլն դոլար տալ եւ Կապանի օդակայանի անվամբ ինքնաթիռ ձեռք բերել:

Այդ ծախսն առավել տարակուսելի եւ անտրամաբանական է թվում, երբ հիշում ենք մեր երկրի՝ գրեթե պատերազմական վիճակում գտնվելու իրողությունը, երբ հիշում ենք, որ անգամ նվազագույն աշխատավարձ ստացող հայաստանցին ամսական հազար դրամ է վճարում՝ հօգուտ ազգային բանակի:

Եթե որեւէ մեկը մեզ հակադարձի, թե դա Քաջարանի կոմբինատի փողն է եւ սեփականատիրոջ գործն է, ապա ստիպված կլինենք հիշեցնել ակնհայտը՝ Քաջարանի կոմբինատը եւս Հայաստանի Հանրապետությանն է, եւ անհարկի ու աննպատակ ծախսեր անելով՝ պետությանը տրվող հարկաբաժինն է նվազում:

Մյուս կողմից, եթե Քաջարանն այդքան միջոցներ ունի, ապա թող նվազեցնի իր մահասփյուռ ազդեցությունը շրջակա միջավայրի վրա եւ ամսական մի քանի հոգով պակասեցնի անժամանակ մահացողների կամ հիվանդացողների քանակը տարածաշրջանում:

Եթե Քաջարանն այդքան միջոցներ ունի, ապա թող մարզում սոցիալական ծրագրերի իրականացման ծավալը հասցնի գոնե Մաքսիմ Հակոբյանի օրերի 10 տոկոսի չափին:

Ուրիշ հարց էլ կա. եթե նույնիսկ ձեռք ենք բերում ինքնաթիռ կամ օդակայան վերագործարկում, ապա ի՞նչ կապ ունի այդ ամենը Վահե մարզպետի հետ:

Եթե պետական միջոցներով ենք այդ ամենն անում, ապա դա կառավարության գործն է:

Եթե Քաջարանի կոմբինատն է ինքնաթիռ ձեռք բերում կամ գործարկում թռիչքադաշտը, ապա եւս կառավարության ու սեփականատերերի խնդիրն է:

Երկու դեպքում էլ մարզպետը կապ չունի, բայց ինքը եւ իր պրոպագանդիստներն այդ ամենն անպայման կապում են մարզպետի հետ: Եթե այդպես է, ապա ի՞նչ մանդատ ունի Վահե Հակոբյանը գնումների սույն գործընթացում: Մի տեսակ տարօրինակ վիճակ է՝ նա հանդես է գալիս ե՛ւ պետության անունից, ե՛ւ Քաջարանի սեփականատերերի անունից, ե՛ւ անգամ ինքնաթիռ վաճառողների անունից:

Քանիցս հայտարարվել է՝ Կապանի օդակայանի վերագործարկման, ինքնաթիռի ձեռքբերման գործում մասնաբաժին ունի Սյունիքի զարգացման եւ ներդրման հիմնադրամը, որի սեփականատերը ՀՀ կառավարությունն է: Այդ դեպքում ինքնաթիռի ձեռքբերումը, նաեւ օդակայանում կատարվող շինաշխատանքները (նախագծումից սկսած) պետք է իրականացվեին գնումների գործընթացի մասին հանրապետությունում գործող կարգի համաձայն: Հետաքրքիր է՝ ե՞րբ եւ որտե՞ղ են հայտարարվել նշված աշխատանքները կատարելու ու ապրանքը ձեռք բերելու համար մրցույթները: Եվ արդյո՞ք գործող կարգի համաձայն իրականացվել են համապատասխան միջոցառումներ: Այլ պարագայում, անկեղծ լինենք, գործ ունենք կոռուպցիոն ռիսկերի հետ:

Եվ այսպես՝ ինչո՞ւ ենք մեր սուղ միջոցներից 5.5 մլն դոլար հատկացնում մի ինքնաթիռի ձեռք բերման համար, որն իրականում կապ չունի Կապանի օդակայանի վերագործարկման հետ:

Ինչո՞ւ ենք անընդհատ ասում, որ 2.5 մլն դոլար ենք ծախսել օդակայանում, բայց չենք ասում, թե կոնկրետ ինչ աշխատանքներ ենք արել:

Ինչո՞ւ ենք 2017-ին հայտարարել՝ օդակայանում կատարվել է 8 մլն դոլարի ներդրում, հիմա էլ ասում ենք՝ 2018-ին դնում ենք 4.5 մլրդ դրամ:

Արդյո՞ք այդ ամենը կատարվել է գնումների գործընթացի մասին ՀՀ օրենքին համահունչ:

Հարցերի պատասխանը դեռեւս չկա, ինչն էլ ճանապարհ է բացում ամենատարբեր ասեկոսեների համար՝ մի կողմից կոռուպցիայի «բույր», մյուս կողմից Քաջարանի կոմբինատը սնանկացման ճանապարհով մինչեւ վերջ տանելու համառություն…

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մեղրու ազատ տնտեսական գոտի. իրականությո՞ւն, թե՞ միֆ

էջ 1

կտեղակայվեն այստեղ, որպեսզի Իրանում աշխատելու հնարավորություն ունենան»:

Հայտարարվեց նաեւ, որ Մեղրու ազատ տնտեսական գոտին կնպաստի Սյունիքի մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը…

Այդ օրվանից մոտ երեքուկես ամիս անց այցելեցինք Մեղրի եւ հետաքրքրվեցինք, թե ի՞նչ է կատարվել ազատ տնտեսական գոտում:

Պարզվում է, սակայն, որ 2017թ. դեկտեմբերի 15-ին Մեղրու ազատ տնտեսական գոտի համարվող վայրում՝ վարչական շենքի բացման ժամանակ, ընդամենը խորհրդանշական կամ խիստ ձեւական արարողություն է տեղի ունեցել, որի նպատակն է եղել՝ հանրության մեջ ստեղծել ազատ տնտեսական գոտու բացման-մեկնարկի տեսիլք: Վարչապետի ներկայությունն էլ, ըստ էության, այդ բեմադրությանը լրջություն հաղորդելու նպատակ է ունեցել:

ԱՏԳ-ի գործունեության հետ կապված մեր հարցումներին մեղրեցիները գրեթե նույն պատասխանը տվեցին՝ **«Դեկտեմբերի 15-ին՝ Կարեն Կարապետյանի կողմից ազատ տնտեսական գոտու մեկնարկն ազդարարելուց եւ վարչապետի՝ ուղղաթիռ բարձրանալուց տասը րոպե հետո այդ գոտու տարածքը, նաեւ նորաբաց վարչական շենքը կողպվել են ու մինչեւ օրս փակ են, մի ուրու անգամ այնտեղ չես գտնի…»:**

Չենք ուզում հավատալ, որ վարչապետը խաբել է սյունեցիներիս. չէ՞ որ Մեղրու ազատ տնտեսական գոտու մասին (էստի համեցեք կանչելով եւ հարայ տալով) խոսել եւ խոսում է գրեթե բոլոր ելույթներում, միջպետական բանակցություններում, նույնիսկ Դավոսի համաշխարհային հարթակում: Մյուս կողմից էլ՝ ազատ տնտեսական գոտին չկա ու չկա…

Եվ ողջամիտ հարց է ծագում՝ Մեղրու ազատ տնտեսական գոտին մի՞ֆ է, թե՞ իրականություն, չէ՞ որ ԱՏԳ-ն կենդանության որեւէ նշան ցույց չի տալիս:

Խնդրո առարկայի հանդեպ հանրային հետաքրքրությունը պատահական չէ. այնքա՜ն գաղթակղիչ էին խոստումները… 2500 աշխատատեղ, 50-70 ընկերության գործունեություն, 100-130 մլն դոլարի ներդրում, տարեկան 250 մլն դոլարի արտադրանքի արտահանում ԱՏԳ-ից եւ այլն:

Ցավոք, այդ խոստումների մեկ տոկոսն անգամ կյանքի չկոչվեց:

Սակայն խոստումներ տալուց ու չկատարելուց զատ ուրիշ եւ ավելի մտահոգիչ անհարմարություն էլ ծագեց ազատ տնտեսական գոտու հետ կապված. կառավարության ղեկավարի խոսքի արժեքը նորից ու կրկին զրոյացավ: Եթե, օրինակ, խոստում է տալիս Վահե մարզպետը՝ որեւէ սյունեցի լուրջ չի ընդունում, էն գլխից գիտենք, որ խաբում է կամ ինչ-որ անձնական շահ է հետապնդում: Բայց երբ Հայաստան պետության կառավարության ղեկավարն է խոստանում եւ իր իսկ հավաստիացումը քամու բերանը շպրտում, ապա դա արդեն (մեղմ ասած) հայոց պետականության վարկաբեկում է նշանակում:

Մյուս կողմից՝ Հայաստանի անկախացման սկզբնական ժամանակվանից Իրանի հետ տնտեսական ակտիվ գործունեության կառուցումն օրակարգային հարց էր մեզանում: Էն գլխից առաջ քաշվեց Մեղրիում ազատ տնտեսական գոտի հիմնելու գաղափարը, բայց միշտ էլ դրա իրագործումը մնաց կիսաճանապարհին կամ ձգձգվեց տարբեր պատճառներով: Կարեն Կարապետյանի կառավարությունը, առաջին հայացքից, գործնական քայլերի դիմեց այդ ուղղությամբ:

Եվ եռուզեռ ու մեծ ակտիվություն էր սպասվում ոչ միայն Մեղրիում, այլեւ ամբողջ Սյունիքում:

Շատ շուտով պարզ դարձավ սակայն, որ սպասված ակտիվությունը չկա: Ավելի ուշ էլ ակնհայտ դարձավ, որ գործնականում որեւէ հետաքրքրություն չկա այդ գոտու հանդեպ:

Ասել է թե՝ մեկ-մեկուկես տարում հայրենի կառավարությանը հաջողվեց վարկաբեկել գեղեցիկ ու վաղուց սպասված այդ ծրագիրը:

Մինչդեռ մեզ թվում էր, աշխարհի շատ-շատ երկրների դրական փորձը նկատի ունենալով, որ Մեղրու ազատ տնտեսական գոտին մեծ նպաստ կբերի երկրի տնտեսական ընթացքին:

Ինչո՞ւ այդպես ստացվեց. հարցի պատասխանը, անշուշտ, առանձին քննարկման նյութ է:

Մինչ այդ արժե հիշել՝ ազատ տնտեսական գոտի նշանակում է որեւէ պետության մեջ առանձնացված տարածք, որտեղ այդ պետության ու օտարերկյա ձեռնարկությունների, ներդրողների թույլատրվում է (տվյալ պետության այլ տարածքների համեմատ) առավել ազատ պայմաններով ծավալել տնտեսական գործունեություն, ինչի համար էլ ստեղծվում են արտոնյալ ու գրավիչ հավելյալ հնարավորություններ՝ օրենսդրական, հարկային, վարչակալական…

Չնայած ԱՏԳ-ի կառուցապատման առաջին փուլի արդյունքները ձեւական էին, հիմա էլ, ըստ պաշտոնական տեղեկատվության՝ մեկնարկել է ազատ տնտեսական գոտու կառուցապատման երկրորդ փուլը, որով նախատեսվում է գործունեության, ենթակառուցվածքների եւ տարածքի ընդլայնում (70 հա-ով)՝ ստեղծելով նախապայմաններ շահութաբեր բիզնես ծավալելու համար…

Կարեն Կարապետյանը, բնականաբար, չի հասցնի կատարել այդ խոստումը եւս, քանզի արդեն իսկ հուշ է նրա գլխավորած կառավարությունը:

Ասվածով հանդերձ, մինչդեռ, հավատում ենք, որ Հայաստանի նոր կառավարությունը, Սյունիքի նոր մարզպետը կվերադառնան այդ խնդրին եւ, ի վերջո, կյանքի կկոչեն տասնամյակներ շարունակ փայփայած ու օգտակար գաղափարը:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Միջազգային մրցանակ Կապանի «Վանատուր» համալիրին

«Վանատուր» ռեստորանահյուրանոցային համալիրը պարգեւատրվել է «Որակի համար-2018» միջազգային մրցանակով, ինչպես նշված է հավաստագրում՝ գերազանց սպասարկման եւ բարձր որակ ապահովելու համար: Մրցանակը շնորհել է «Առեւտրի լիդերների գլոբալ ակումբը»: Այն ստեղծվել է Մադրիդում 40 երկրի գործարարների եւ ձեռնեռեցների նախաձեռնությամբ, իսկ այժմ միավորում է 95 երկրի 7500 ընկերություն, որոնք մասնագիտացված են արդյունաբերության, սպասարկման, առեւտրի եւ այլ ոլորտներում: Ակումբը նպատակ ունի ավելի սերտացնել տնտեսական ու մասնագիտական կապերն աշխարհի գործարարների միջեւ՝ հիմնականում շեշտը դնելով մանր ու միջին ձեռնարկությունների վրա՝ չբացառելով նաեւ տրանսմիջազգային կորպորացիաները:

Մարտի 12-ին Փարիզի «Մերիդիեն էտուալ» հյուրանոցում տեղի է ունեցել մրցանակների հանձնման արարողությունը: Ակումբի գլխավոր քարտուղար եւ գործադիր տնօրեն Ռիկարդո Ռոզո Լոպեսը պատվավոր մրցանակը հանձնել է Կապանի «Վանատուր» համալիրի գործադիր տնօրեն Սիլվա Բաղդասարյանին: Ի դեպ, Հայաստանից մրցանակի արժանացած միակ կազմակերպությունը «Վանատուր» ռեստորանահյուրանոցային համալիրն էր:

- Շատ հաճելի էր մասնակցել նման արարողության, քանի որ Հայաստանից միակն էինք, ուստի պատեհ հնարավորությունը բաց չթողեցինք ներկայացնել մեր երկիրը, Սյունիքի մարզը, նաեւ բոլորիս համար սիրելի մեր Կապան քաղաքը, - պատմում է Սիլվա Բաղդասարյանը, - նույնքան հաճելի էր շփվել գործարար մարդկանց հետ, հաղորդակից լինել նրանց գաղափարներին ու մտահղացումներին, ընդ որում՝ մասնակիցները ներկայացնում էին ոչ միայն ռեստորանային բիզնեսը, այլեւ բոլոր ոլորտները: Նախկին Խորհրդային Միության հանրապետություններից ներկայացված էին Բելառուսը, Ղազախստանը, Մոլդովան, Ադրբեջանը, Վրաստանը, Ուկրաինան:

Լուսանկարում՝ «Վանատուր» համալիրի գործադիր տնօրեն Սիլվա Բաղդասարյանը ամուսնու՝ Լեոնիդ Գրիգորյանի հետ՝ մրցանակը ստանալիս

Մրցանակը ստանալով՝ մեծ հպարտություն ապրեցինք, բայց այն պարտավորեցնում է, որ առաջիկայում եւս մեր համալիրի սպասարկման մակարդակն անհրաժեշտ է պահել ոչ միայն պատշաճ մակարդակի վրա, այլեւ էլ ավելի առաջընթաց ապահովել: Միայն ցավում եմ, որ ժամանակը շատ կարճ էր, քանի որ շփումները տարբեր ոլորտները ներկայացնող մարդկանց հետ հարստացնում են կենսափորձը, փորձի փոխանակման հնարավորություն ընձեռում: Նաեւ ուզում եմ շնորհակալական խոսքս հղել «Վանատուր» համալիրի ողջ անձնակազմին՝ այս մրցանակը նաեւ նրանց աշխատանքի եւ նվիրումի արդյունքն է:

Տիկին Սիլվան հավելեց, որ իրենց հետ տարել էին համալիրում մատուցվող ճաշատեսակների եւ խորտիկների լուսանկարները եւ ներկայացրել ժյուրիին, եւ նրանք զարմացել էին, որ այդ ամենը պատրաստում է ինքը՝ գործադիր տնօրենը, ու այդ ամենի մեջ հոգի է դնում:

- Մի աննկարագրելի զգացում ունեցանք, երբ Փարիզում հնչեց ոչ միայն Հայաստանի, այլեւ մեր ծննդավայր Կապանի անունը եւ դա ամենատարբեր ազգերի մարդկանց ներկայությամբ, Կապանի «Վանատուր» համալիրի անունը, - զրույցին միանում է Լեոնիդ Գրիգորյանը, ով նույնպես ներկա էր մրցանակաբաշխությանը, - **շատերը չգիտեին, թե որտեղ է գտնվում Հայաստանը, Կապանը, եւ դա մի առիթ էր անտեղյակներին ծանոթացնելու մեր հինավուրց երկրին, ինչու չէ՝ մեր գողտրիկ քաղաքին:**

Մարտի 26-ին «Վանատուր» համալիրում մտերիմ մարդկանց ներկայությամբ տեղի ունեցավ շնորհանդես, որի ընթացքում ներկայացվեց մրցանակը, հնչեցին բարեմաղթանքի եւ շնորհավորանքի խոսքեր: Ելույթ ունեցողները նշեցին համալիրում տիրող պատշաճ սպասարկման կուլտուրան, մատուցվող ճաշատեսակների եւ խորտիկների որակը, նաեւ այն անմիջական մթնոլորտը, որ տարբեր հանդիսությունների ժամանակ լինում է համալիրում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Գագիկ Օհանջանյան. «Վստահեցնում եմ՝ Վահե Հակոբյանի հեռանալու հաջորդ օրը Կապանի մարզադաշտի եւ ֆուտբոլի ակումբի միջեւ ծագած արհեստական կռիվն ավարտվելու է, ֆուտբոլն էլ վերադառնալու է մարզկենտրոն»

Մարտի 11-ին Հանրային հեռուստաընկերության «Օրակարգ» լրատվականի կիրակնօրյա «360 աստիճան» թողարկման մեջ ««Գանձասար-Կապան». հեռացած ֆուտբոլ» խորագրով մի ռեպորտաժ սփռվեց Կապանի մարզադաշտի վերաբերյալ, ավելի ստույգ՝ «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբի եւ Կապանի մարզադաշտի սեփականատիրոջ հարաբերություններին առնչվող:

Անցած օրերին այդ հաղորդումը թեժ քննարկման առարկա էր Կապանում: Տարբեր ու իրարամերժ կարծիքներ էին հնչում: Հարցը շարունակում է մնալ հանրության ուշադրության կենտրոնում:

«Սյունյաց երկրի» խմբագրությունն էլ որոշ դիտարկումներ ունի խնդրո առարկայի վերաբերյալ, ինչի համար էլ զրույցի հրավիրեցինք Կապանի մարզադաշտի սեփականատեր Գագիկ Օհանջանյանին:

- Պարոն Օհանջանյան, նախ մեզ ուրախացրեց Հ1-ի պահվածքը, որ լրագրողական խումբ է հատուկ ուղարկել Կապան՝ քաղաքի համար հրատապ այդ հարցը լուսաբանելու, բայց նաեւ զարմանալի է, որ ամիսներ ու տարիներ շարունակ նույն լրատվամիջոցն աչք է փակում Սյունիքի մարզի բազում հիմնախնդիրների վրա: Արդյո՞ք դա ինչ-որ մեկի ցանկության արտահայտությունը չէր: Կուզեինք լսել Ձեր գնահատականը Հ1-ի այդ նախաձեռնությանը, որ մեզ համար, ինչպես նշեցինք, երկակի ընկալում ունի՝ դրական եւ բացասական:

- Այն պահին, երբ լրագրողները եկան, մարզադաշտում չէի: «Գանձասար-Կապան» ակումբի երկրպագուներից մեկը զանգահարեց եւ հայտնեց, թե Հ1-ի լրագրողները մարզադաշտի մոտ ինձ են սպասում: Եկա, ծանոթացանք եւ առաջին բանը, որ ինձ փոխանցեցին լրագրողները, այն էր, որ եկել են անկողմնակալ հաղորդում պատրաստելու մարզադաշտի շուրջ ծավալված վեճի մասին: Մոտավորապես մեկ ժամ ինձ հետ զրուցեցին, մանրամասն ներկայացրի խնդրի էությունը, այդ ընթացքում օպերատորը նկարահանումներ էր կատարում: Բայց, այդքանից հետո՝ հաջորդ օրն ինձնից ծածուկ նորից եկել են մարզադաշտ եւ ինչ-որ հավելյալ նկարահանումներ արել: Իսկ մեկնելուց առաջ լրագրողներից մեկը մոտեցել է ինձ, թե՝ կարո՞ղ եմ մի հարց տալ: Ասացի՝ խնդրեմ: Հարցրեց՝ եթե գան, մարզադաշտը ձեռքիցդ ուժով վերցնեն, ի՞նչ պիտի անես: Պատասխանեցի՝ պատրաստ եմ՝ թող գան ու վերցնեն, եթե կարող են: Պարզապես զարմացած էի նման հարցադրումից, թեեւ արժեր, որ ավելի կոպիտ ու համարժեք պատասխան տայի:

Այդ ամենից, նաեւ հեռուստահաղորդումը դիտելուց հետո կարելի է ասել՝ Հ1-ի հաղորդում-ապատեղեկատվությունը պատվիրել էր Վահե Հակոբյանը: Որպեսզի Դուք նույնպես համոզվեք դրանում՝ բերեմ մեկ-երկու փաստարկ եւս:

Մեկ ժամից ավելի ինձ հետ զրուցել են լրագրողները եւ քննարկել թեմային առնչվող գրեթե բոլոր հարցերը, բայց մեկ-երկու նախադասություն են ընդամենը եթեր սփռել:

Կամ՝ հաղորդման մեջ մի հանդերձարանի անմխիթար վիճակ է մանրամասն ցուցադրվում՝ բառ անգամ չասելով, որ դա 60-ական թվականներից չգործող հանդերձարան է, որ մարզադաշտն ունի այլ եւ շատ թե քիչ կահավորված ու բարեկարգ հանդերձարան՝ համայնքապետարանին պատկանող:

Այդքանից հետո չասե՞մ, որ հաղորդումը պատվիրված է եղել եւ խնդիր է ունեցել աղավաղել իրականությունը, մոլորեցնել կապանցիներին:

- Կուզեինք իմանալ, թե ում միջեւ է վեճը. մեր տվյալներով՝ «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբի եւ Կապանի մարզադաշտի սեփականատիրոջ: Արդյո՞ք այդպես է, եւ ո՞վ է «Գանձասար-Կապան» ակումբի նախագահը:

- Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը, գործադիր տնօրենը՝ Գառնիկ Աղաբաբյանը:

- Անդրադառնանք խնդրի էությանը: Էլի վկայակոչենք կիրակնօրյա «360 աստիճան» լրատվականում բերված փաստերը, այն է՝ Կապանի մարզադաշտը երկու տարի առաջ որակազրկվել է հանրապետության ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից, եւ ժամկետ էր տրված թերությունները վերացնելու համար: Իսկապե՞ս որակազրկված է Կապանի մարզադաշտը, կա՞ նման խնդիր:

- 2015-2016թթ. մրցաշրջանն ավարտվելուց հետո Գառնիկ Աղաբաբյանն ինձ հայտնեց, որ իրենք մարզադաշտի հետ պայմանագիրը խզում են, փորձեցի իմանալ պատճառը, նա էլ թե՝ թերություններ, պրոբլեմներ կան, այլ հարցեր չտվեցի, միայն հարցրի՝ այլեւս չե՞ք մտնելու ստադիոն, բացասական եղավ պատասխանը: Դե ուրեմն գնացեք եւ թիմի հանդիպումներն անցկացրեք որտեղ ուզում եք. սա էր իմ պատասխանը:

Ինչ վերաբերում է որակազրկմանը, ասեմ, որ ո՛չ ֆուտբոլի ֆեդերացիայից են տեղյակ պահել, թե խաղադաշտը որակազրկված է, ո՛չ էլ որեւէ փաստաթուղթ են ներկայացրել: Այդ մասին մամուլից եմ իմացել: Եվ ոչ էլ թերությունները վերացնելու ժամանակացույց են առաջարկել ինձ:

- Ստացվում է այնպես, որ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան խաղադաշտը որակազրկել է առանց տեղում ուսումնասիրություն կատարելո՞ւ, առանց մարզադաշտի սեփականատիրոջը տեղյակ պահելո՞ւ: Իսկապե՞ս այդպես է:

- Մարզադաշտի որակի պատշաճ ուսումնասիրություն չի եղել: Հենց այնպես չեմ ասում: Իրենք գործող պայմանագիրը խզել են, որից մոտավորապես երկու-երեք ամիս հետո նոր իմացել եմ, որ դաշտը որակազրկված է:

Մեզ հետ պայմանագիրը խզելուց հետո մի երիտասարդ եկավ մարզադաշտ, ասաց՝ ֆուտբոլի ֆեդերացիայից է, եկել է ուսումնասիրություն կատարելու: Հետո իմացա, որ պատվերով է եկել: Ինչ-որ չափումներ արեց, վերջում էլ թե՝ արձանագրելու եմ, որ Կապանի խաղադաշտի վիճակը վատ է: Փորձեցի իմանալ պատճառը, նա էլ հակադարձեց՝ դաշտի մեջ փոսեր կան: Մի բան, որ չէր համապատասխանում իրականությանը, անզեն աչքով էլ կարելի է տեսնել, թե մեր խաղադաշտի խոտածածկն ինչ որակ ունի:

- Հետաքրքիր է՝ ինչո՞ւ չեք փորձել դատական կարգով վիճարկել ֆեդերացիայի որոշումը՝ թող հիմնավորեին, թե ինչու են որակազրկել մարզադաշտը: Չե՞ք փորձել իրավական ճանապարհով հարցին լուծում տալ:

- Իմաստ չեմ տեսել դրա մեջ: Մտածեցի՝ իրենց ձեռքին է ամեն ինչ, ինչ կուզենան՝ կանեն: Եթե թիմն այստեղից վերցրել-տարել են՝ կապանցի հանդիսականին զրկել իր քաղաքում ֆուտբոլ դիտելու հնարավորությունից եւ հաճույքից, ամեն ինչի ընդունակ են:

- Հիմա՝ ժամանակներ անց, շարունակո՞ւմ եք մնալ այն կարծիքին, որ մարզադաշտը որակազրկվել է անհիմն, որ դաշտը համապատասխանում է պահանջվող չափանիշներին:

- Այսօր Հայաստանում մեր խաղադաշտի խոտածածկի նմանը քիչ կգտնվի մեկ այլ խաղադաշտ: Փոխանակ մի բանով օգտակար լինեն, գան, միասին քննարկենք, թե ինչպես անենք, որ ֆուտբոլը տեղափոխվի Կապան, մի բանով հուսադրեն, դեմ ենք առել անտարբերության պատին: Ի դեպ, խոսքն այն խաղադաշտի մասին է, որ 2002-ին ճանաչվել է հանրապետության լավագույն մարզադաշտ:

- Կարելի՞ է ասել, որ այս խնդիրն արհեստականորեն է բարձրացվել:

- Իհարկե, արհեստական վեճի մասին է խոսքը: Պայքարն ամենեւին էլ մարզադաշտի որակի համար չէ, պայքարը մի բանի համար է՝ օրինական սեփականատիրոջից խլել մարզադաշտը եւ դարձնել Վահե Հակոբյանի սեփականություն: Հենց այդ նպատակով էլ կամ դրան զուգահեռ փորձում են ինձ հեղինակազրկել կապանցիների աչքում, ինչի համար էլ մայրաքաղաքից լրագրողներ է բերել մեզ վրա:

Մի բան էլ հիշեցնեմ, որ համոզվեք վեճի արհեստականության եւ մարզպետի շահախնդրության մեջ: Երբ Վահե Հակոբյանը Քաջարանի կոմբինատի վարչական տնօրենն էր կամ առաջին փոխտնօրենն՝ եկավ մարզադաշտ, ծանոթացավ խնդիրներին ու դրանք լուծելի համարեց՝ խոստանալով, որ համատեղ ուժերով թերությունները կվերացվեն ու մարզադաշտը լիարժեք կօգտագործվի: Մարզպետ դառնալուց հետո ոչ միայն մոռացավ խոստումները, այլեւ իր ախորժակը չթաքցրեց…

- Ուզում ենք հարցն այլ հարթություն տեղափոխել: Եթե անկեղծ լինենք, այսօր մարզադաշտում ի՞նչ սկզբունքային թերություններ եք տեսնում:

- Նախ՝ տրիբունայի փայտյա նստատեղերը պիտի փոխարինվեն թիկնակով, պլաստմասսայե նստատեղերով, երկու թիմերի համար պիտի լինեն առանձին զուգարաններ եւ մերսման սենյակներ, ցնցուղարաններ, խաղադաշտի անվտանգության գոտին պիտի փոխվի: Մի տարի առաջ «Հայկական ժամանակ» թերթին տված հարցազրույցում ասել եմ, որ պատրաստ ենք համագործակցել ակումբի ղեկավարության հետ, կես գումարն իրենք դնեն, կեսը՝ ես, տրիբունաները կարգավորենք: Հանդերձարանի հետ գործ չունեմ, քաղաքապետարանի ենթակայության տակ է: Իհարկե, կան խնդիրներ, որոնք պետք է լուծվեն:

- Որպես սեփականատեր, երբեւէ ֆինանսական նախահաշիվ կազմե՞լ եք այդ թերությունները վերացնելու համար: Ավելի կոնկրետ՝ վերոհիշյալ խնդիրների լուծումը որքա՞ն գումար կպահանջի:

- Իմ առջեւ նման խնդիր չեմ դրել: Երբ «Գանձասար» ակումբի նախագահը Մաքսիմ Հակոբյանն էր, ինձ ասաց, որ մարզադաշտը նորոգելու խնդիրն ինքն է հանձն առում, միայն թե ֆուտբոլային հանդիպումների ժամանակ հանդիսականի մուտքը խաղադաշտ անվճար պիտի լինի: Առանց տատանվելու համաձայնեցի: Հուսով էի, որ «Գանձասար-Կապան» ակումբի նոր ղեկավարությունը նույն մոտեցումը կունենա: Դրա համար էլ առանձին ֆինանսական նախահաշիվ կազմելու անհրաժեշտություն չեմ տեսել:

- Գոնե հիմա՝ այսքան աղմուկ-աղաղակից հետո, Դուք գիտե՞ք, թե մոտավորապես որքան կարժենա այդ խնդիրների լուծումը:

- Ես կոնկրետ չգիտեմ՝ ինչ է իրենց ուզածը, ինձ թերությունների կամ պահանջների ցանկ չի ներկայացվել: Բայց, կարծում եմ՝ պլաստմասսայե աթոռների տեղադրումը, օրինակ, մոտ 15 հազար դոլար կարժենա, մարզադաշտի անվտանգության գոտին մի հազար դոլարի պատմություն է, իսկ հանդերձարանի դեպքում, արդեն նշեցի, ոչ մի բան չեմ կարող անել, որովհետեւ դա համայնքապետարանի սեփականությունն է:

- Ըստ այդ հեռուստահաղորդման՝ Կապանում ավելի թանկ հաճույք է ֆուտբոլ խաղալը, քան մայրաքաղաքի՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանող մարզադաշտերում, թե իբր 750 հազար դրամ վճարում են Կապանի մարզադաշտում մի խաղի համար, մայրաքաղաքում՝ 300 հազար դրամ: Ձեր պարզաբանումը:

- Իմ տեղեկություններով մի հանդիպման համար մայրաքաղաքում վճարում են երկուսուկես անգամ ավելի Ձեր նշած թվից:

Ամսական, իրոք, ակումբը մարզադաշտին հատկացնում էր 2.2 մլն դրամ, որից 300 հազարը հատկացվում էր հարկային պարտավորությունները մարելուն: Ամսական մեր խաղադաշտում անցկացվում էր մոտ տասը հանդիպում, «Գանձասար» եւ «Գանձասար-2» թիմերը նաեւ իրենց մարզումներն էին անցկացնում: Ասել է թե՝ 2.2 մլն դրամը տալիս էին ոչ թե երեք խաղի, այլ տասը խաղի եւ այդ թիմերի մարզումների համար: Մեղմ ասած՝ թվերը, որ ներկայացվել են հեռուստալսարանին, իրականությանը չեն համապատասխանում:

- Եվ որքանո՞վ է ճիշտ այն պնդումը, թե Գագիկ Օհանջանյանը մարզադաշտին հատկացված գումարից՝ 2.2 մլն դրամից, ներդրում չի կատարել:

- Նախկինում Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը ջրի եւ էլեներգիայի համար գումար էր հատկացնում, հետո ինքս եմ այդ վճարումները կատարել, խմելու եւ ոռոգման ջրի, ծախսված էլեկտրական էներգիայի դիմաց՝ նույնպես: Բացի այդ՝ մարզադաշտը մի քանի աշխատող ունի, որոնց աշխատավարձ ենք վճարում, սոցիալական վճարումներ անում, խոտածածկը պահպանելու համար քիմիկատներ ձեռք բերում: Իմ սեփական միջոցներից էլ ավելացնում եմ, որ խաղադաշտն ըստ պատշաճի պահպանվի: Իսկ վերջին մեկուկես տարում լիովին իմ խնայողությունների հաշվին եմ այդ աշխատանքները կատարել, այլ աղբյուրներից գումար հայթայթել:

Եվ չնայած դրան, հայտնի հեռուստահաղորդման ժամանակ անագնիվ կերպով շահարկվեց 2.2 մլն դրամ ամսական վարձավճարի հարցը:

Հետեւյալը պետք է ասեմ՝ մարդկային ու բարոյական չէ որեւէ մեկի փողերը հաշվելը: Բայց եթե Վահե Հակոբյանն ուզում է հաշվել, ապա թող տղամարդ լինի ու ասի, թե որքա՞ն գումար է ծախսում ակումբի վրա, որքանո՞վ է թիմը հատուցում այդ ծախսերը, ի՞նչ անձնական շահ ունի ինքն այդ ամենից…

- Մի հարց կա, որ հուզում է մարդկանց, մասնավորապես, առողջարարական վազքով զբաղվողներին, Դուք իսկապե՞ս արգելել եք նրանց օգտվել մարզադաշտից:

- Եթե մեկը գա եւ ասի, որ ինձ արգելել են ստադիոնում վազել, ներողություն կխնդրեմ: Բայց այդ մարդիկ, ովքեր ուզում են օգտվել ստադիոնից, պիտի օգտվեն վազքուղյակներից, խաղադաշտ չպիտի մտնեն եւ խոտածածկը տրորեն: Թող մոտենան ինձ կամ առողջարարական խմբեր կազմեն, ժամ նշանակեն, թե երբ են ուզում օգտվել ստադիոնից, եւ մենք կընդառաջենք:

- Նշված հեռուստահաղորդման ժամանակ Կապանի համայնքապետը հայտարարեց, թե սեփականատերը

Թատրոնի միջազգային օրն էր

Թատրոնի միջազգային օրվան նվիրված մարտի 27-ին միջոցառում տեղի ունեցավ Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում: Գեղարվեստական ղեկավար Արթուր Գաբրիելյանը հանդիսականին հայտնեց, որ այս անգամվա միջոցառումը տարբերվելու է նախորդներից իր ձեւաչափով եւ նպատակ ունի ներկայացնելու, թե ինչպես է գործում թատրոնը մեր քաղաքից, նաեւ հանրապետությունից դուրս: Այդ ամենն արվեց տեսաֆիլմի միջոցով, որում նախ արտացոլված էր, թե ինչպես Կապանի Ալ.Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնը հանդես եկել Բելառուսի Բրեստ քաղաքում կայացած միջազգային փառատոնում: Մինչ բեմադրությունը Կապանից տարված տեսաֆիլմի միջոցով բելառուսցիները տեղեկացան Մեծ հայրենականում Բրեստ ամրոցի պաշտպանության ժամանակ կապանցի զինվորների մասնակցությանը: Այնուհետեւ հանդիսատեսի դատին հանձնեցին Հրանտ Մաթեւոսյանի «Աշնան արեւ» բեմադրությունը, որը ջերմությամբ ընդունվեց հանդիսականի կողմից: Բեմադրության մասին

դրվատանքի խոսքեր եւ գնահատականներ հնչեցրին թատերագետները, բեմադրությանը ներկա հանդիսականները:

Թատրոնը բեմադրություններով հանդես է եկել ՀՀ զինված ուժերի առաջին եւ չորրորդ բանակային կորպուսների՝ Սյունիքում տեղակայված զորամասերի զինվորների համար՝ փոքր-ինչ նրանց կտրելով զինվորական առօրյայից:

Շիրվանզադեցիներն անցյալ տարի հյուրախաղով հանդես եկան նաեւ Երեւանի քաղաքապետարանի «Մեր Մկրտչյան» արտիստական թատրոնում՝ հանդիսականի դատին հանձնելով Ռ. Կրաշաուսկասի «Լքված դաստակերտի ուրվականները» բեմադրությունը (բեմադրիչ՝ ՀՀ վաստակավոր արտիստ Հովհաննես Հովհաննիսյան)՝ արժանանալով մայրաքաղաքի հանդիսականի բարձր գնահատականին: Այնուհետեւ բեմում մոնոներկայացում էր՝ Անտոն Չեխովի «Կարապի երգը» տրագիկոմեդիան (դերակատար՝ Արամ Հայրապետյան, բեմադրությունը՝ Գրիշա Մարգարյանի) :

Բարեմաղթանքի խոսքեր հնչեցին թատրոնի միջազգային օրվա առթիվ, հանձնվեցին պարգեւներ: Վերջում թատրոնի տնօրեն, ՀՀ վաստակավոր արտիստ Կամո Արզումանյանը երախտագիտություն հայտնեց հանդիսականին՝ հիշարժան օրը թատրոնում գտնվելու եւ ողջերթի խոսքերի համար՝ կարծիք հայտնելով, որ թատրոնի հաջողությունը մեծապես պայմանավորված է հանդիսականի՝ նրա հանդեպ վերաբերմունքով:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Չի ուզում ներդրումներ անել, իսկ ակումբը կարող է եւ պատրաստ է նեդրում կատարել: Որքանո՞վ է հիմնավոր Աշոտ Հայրապետյանի այդ դիտարկումը:

Ավելի նպատակահարմար չէ՞ր լինի, որ նա ե՛ւ ֆուտբոլային ակումբի ղեկավարին, ե՛ւ մարզադաշտի սեփականատիրոջը հրավիրեր բանակցությունների, փորձեր հարթել կնճիռը, մինչդեռ փաստաբանի դեր էր ստանձնել:

- Մեկ տարի առաջ համայնքապետին ասել եմ, որ նախածեռնի մի հանդիպում ակումբի ղեկավարության հետ, նստենք եւ միասին քննարկենք մարզադաշտի նորոգման խնդիրները, համագործակցության ուղիները: Ոչ մի արձագանք չեղավ: Պետք չէր նրան, ինչպես ասացիք, փաստաբանի դեր ստանձնել հաղորդման ժամանակ եւ անհիմն հայտարարություններ անել իմ առումով: Ի վերջո, ֆուտբոլը Երեւանից պիտի տեղափոխվի Կապան, թիմը պիտի գտնի իր հանդիսականին, եւ դրանում նախեւառաջ, նախանձախնդիր պիտի լինի համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանը: Ինչի՞ է նման, որ կապանցի ֆուտբոլասերն իր սիրելի թիմի ելույթների մասին իմանում է մամուլից կամ համացանցից կամ Կապանի անունը կրող թիմում մի կապանցի ֆուտբոլիստ հանդես չի գալիս: Կապանը տասնամյակներ ի վեր հայտնի էր իր ֆուտբոլային ավանդույթներով: Կապանյան ֆուտբոլային թիմը ստեղծվել է 1950-60-ական թվականներին՝ «Լեռնագործ» անվամբ, մրցում էր Խորհրդային Միության ֆուտբոլի առաջնության «Բ» խմբում, եւ թիմում հանդես էին գալիս միայն կապանցիներ: Իսկ հիմա՞…

- Վերջին մեկուկես տարում ֆուտբոլային ակումբի կողմից որեւէ գործնական քայլ եղե՞լ է՝ կնճիռը հարթելու ուղղությամբ:

- Բացարձակապես նման բան չի եղել, ոչ մեկն ինձ հետ չի խոսել, որեւէ առաջարկ չի եղել:

Դուք, որքանով տեսնում եմ, խնդիրը քաղաքակիրթ եւ բարոյական հարթության մեջ եք համառորեն փնտրում:

Իրականությունը դա չէ:

Այն, ինչ կատարվում է Կապանի ֆուտբոլի հետ, պատահական չէ եւ եզակի երեւույթ չէ Սյունիքում:

Տեղացիներին մեր կյանքի բոլոր ոլորտներից դուրս մղելը Վահե Հակոբյանի գլխավոր ծրագրերից է. Սյունիքն առանց սյունեցիների՝ ահա նրա նշանաբանը:

Վերցրեք, խնդրեմ, առողջապահական համակարգը, մարզպետարանը, Քաջարանի կոմբինատը… Ամենուրեք տեղացիները երկրորդ սորտի մարդիկ են հայտարարված: Իսկ եթե նույնիսկ տեղացիներից որեւէ մեկին պաշտոն է տրվում, ապա տվյալ մարդը պետք է անարժան լինի, խոցելի լինի, որ ցանկացած ժամանակ, չհնազանդվելու դեպքում, գործ սարքվի նրա գլխին:

«Գանձասար-Կապան» ակումբում Կապանին առնչվող միայն անունն է մնացել: Ոչ մի կապանցի թիմում չկա: Տեղացի կարող երիտասարդներից խաղացողներ պատրաստելու փոխարեն ինքն աշխարհի տարբեր երկրներից ֆուտբոլիստներ է հրավիրում՝ բազմապատիկ անգամ շատ գումարներ վճարելով, քան ժամանակին տեղացիներին էր վճարում:

Գոնե բարոյականություն ունենա եւ Կապան բառից հրաժարվի: Թող, օրինակ, Գյումրի կոչի իր ակումբը, այնտեղ է խաղեր անցկացնում…

- Դուք չե՞ք փորձել հանդիպել Սյունիքի մարզպետի հետ, ով նաեւ «Գանձասար-Կապան» ակումբի նախագահն է:

- Ասեմ, որ ակումբը նախ խզել է պայմանագիրը մարզադաշտի հետ եւ նոր միայն դաշտը որակազրկել ու փաստաթղթեր հորինվել: Գոնե ակումբի ղեկավարությանը պիտի հիմնավորեր, թե ինչու է խզում պայմանագիրը: Ի

վերջո, այսօր ակումբի նախագահը Սյունիքի մարզպետն է, եւ բանակցությունների նախաձեռնողը, առաջին քայլն անողը նա պիտի լինի: Որքան էլ մեծ լինի իմ ցանկությունը՝ մի սեղանի շուրջ նստել ակումբի նախագահի հետ, առաջին քայլ անողը ես չէ, որ պիտի լինեմ: Ես շատ բան չեմ ուզում, ընդամենն ուզում եմ, որ «Գանձասար-Կապանի» տնային հանդիպումներն անցկացվեն սեփական հարկի տակ: Ինձ շատ ֆուտբոլասերներ են դիմում, թե, ի վերջո, ե՞րբ է «Գանձասար-Կապանը» հանդես գալու սեփական հարկի տակ: Ո՞վ չի հիշում, որ Կապանի մարզադաշտը հանրապետությունում հայտնի էր իր բարձր հաճախելիությամբ, հանդիպումներ կային, որոնց ժամանակ երեք հազարից ավելի հանդիսական էր ստադիոն հաճախում, մարդիկ երկու ժամ կտրվում էին առօրյա հոգսերից, երիտասարդները՝ փողոցի բացասական ազդեցությունից: Մինչդեռ ուժակումբը Կապանինն է եւ ոչ իր անձնականը: Եվ ակումբի խաղերը նրա համար չեն, որ ինքը Երեւանում գնա մարզադաշտ ու հաճելի ժամանակ անցկացնի: Կրկնում եմ՝ ֆուտբոլի ակումբը Կապանին է եւ այն պետք է վերադարձվի Կապան:

Մի բան էլ հիշեցնեմ մարզպետին՝ մարզադաշտը չեմ զիջելու, իզուր ջանքեր թող չգործադրի, իզուր խարդավանքներ ու սադրանքներ թող չհրահրի…

- Վերոնշյալ հաղորդման մեջ ասվում է, որ Կապանում ծրագրվում է նոր մարզադաշտ կառուցել, մնում է կարծել, որ գերադասում են մի քանի միլիոն դոլար ներդնել այդ նպատակի համար, քան բանակցել Կապանի մարզադաշտի սեփականատիրոջ հետ եւ առկա թերությունները վերացնել:

- Դա իրենց խնդիրն է: Բայց յուրաքանչյուր նոր նախածեռնություն պիտի իմաստավորված լինի, այլ ոչ թե պիտի գործել ըստ ամբիցիաների: Չպիտի մոռանալ, որ Կապանի մարզադաշտը նաեւ հարազատ միջավայր է կապանցիների համար, նրա հետ կապված մարդիկ հուշեր ունեն, եւ ամենակարեւորն այն է, որ գտնվում է քաղաքի կենտրոնում: Մինչեւ օգոստոս սպասելու եմ, եթե կոնկրետ առաջարկներ չլինեն, մանկապատանեկան ֆուտբոլի ակումբ եմ բացելու եւ փորձելու եմ Կապանում ֆուտբոլային ավանդույթները վերականգնել: Արդեն որոշ մարդկանց եւ կազմակերպությունների հետ բանակցություններ եմ վարում:

- Եվ, իհարկե, կուզենայինք իմանալ՝ կա՞ն հարցեր, որ դուրս մնացին մեր զրույցից:

- Ես դարձյալ ուզում եմ խնդրի արմատին նայել, այս վեճի իրական էությանը:

Լավ, մի՞թե տարօրինակ չէ, որ Սյունիքի մարզպետը, ով իբր պետք է ծանրաբեռնված առօրյա ունենա, ֆուտբոլի թիմ է ղեկավարում: Իսկապե՞ս ինքն այդքան ժամանակ ունի: Իսկապե՞ս ինքը տիրապետում է ֆուտբոլին, մարդկանց հետ նորմալ հարաբերվելու տարրական մշակույթին:

Ինչո՞ւ մեր հասարակության մեջ ամեն մի կառույց կամ կազմակերպություն հաշվետվություն է տալիս հանրությանը, իսկ ինքը, իբրեւ ֆուտբոլի ակումբի ղեկավար, հաշվետվություն չի տալիս, թե ֆուտբոլի ակումբի ղեկավար դառնալուց հետո ի՞նչ աշխատանքներ է կատարել, ինչո՞ւ է այդքան գումարներ ծախսելուց հետո անթիվ ձախողումներ ունեցել:

Նորից դառնանք մարզադաշտի որակի խնդրին:

Ես չեմ ասում՝ մեր խաղադաշտն իդեալական է, բայց մի՞թե կոռեկտ է կամ խելամիտ է մայրաքաղաքի լավագույն ստադիոնների հետ համեմատելը: Կա՞ Հայաստանի մարզերում մի ուրիշ մարզադաշտ, որ դրվում է մայրաքաղաքի լավագույն ստադիոնների հետ համեմատության մեջ:

Կամ՝ արդյո՞ք մարզադաշտի որակով է պայմանավորված «Գանձասար-2»-ի խաղերը նույնպես մեր մարզադաշտից հանելը եւ Կապանի պահեստային դաշտում անցկացնելը, որի վիճակը մի քանի անգամ ավելի վատ է: Ի՞նչ բացատրություն տալ դրան, մանավանդ որ պատրաստ եմ սկզբնական շրջանում «Գանձասար-2»-ին դաշտը տրամադրել անվճար:

Ոչ, խնդիրը որակի մեջ չէ, խնդիրը վարձավճարի չափի մեջ չէ, ինչպես արդեն ասացի: Խնդիրը մարզպետի ախորժակի մեջ է, նրա անհեթեթ հավակնությունների մեջ: Նա ուզում է դաշտը ապօրինաբար խլել ինձանից, նա ուզում է Կապանին եւս մեկ հարված հասցնել եւ մեր քաղաքը զրկել ֆուտբոլից, որին ես դեմ եմ…

ԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ եւ ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Կանանց միամսյակը նշեցին համերգային ծրագրով

Կանանց միամսյակին (մարտի 8-ից ապրիլի 7-ը) էր նվիրված Կապանի արվեստի մանկական դպրոցում մարտի 17-ին կազմակերպված ցերեկույթը:

Կրթօջախի տնօրեն Մարինա Նահապետյանը բարեմաղթանքի խոսք հղեց միջոցառմանը ներկա կանանց եւ աղջիկներին Կանանց միջազգային օրվա եւ Մայրության եւ գեղեցկության տոնի առթիվ՝ նրանց ցանկանալով արեւշատություն ու գարնանային բարձր տրամադրություն:

Այնուհետեւ դպրոցի սաները ոհանդես եկան համերգային ծրագրով:

Մայրություն, գարուն, գարնանային զարթոնք ու տրամադրություն. սրանք էին ցերեկույթի հիմնական թեմաները: Ելույթներ հնչեցին տարբեր երաժշտական գործիքներով: Ինչեւէ, համերգային ծրագիրը հանդիսականին որոշակի պատկերացում տվեց երեխաների նախասիրության եւ կատարողական կարողությունների մասին: Իսկ դպրոցի միջանցքում ցուցադրված էին կերպարվեստի բաժնի սաների աշխատանքները: Համերգի վերջում պարարվեստի բաժնի տարբեր դասարանների սաներն անակնկալ էին պատրաստել: Նրանց ներկայացրած պարային կոմպոզիցիան անտարբեր չթողեց ոչ ոքի: Ի դեպ, մշակույթի նախարարության «Մշակութային կրթության աջակցություն» հիմնադրամը (տնօրեն՝ Նելլի Սարգսյան) դպրոցի շնորհալի սաներին տրամադրել է երեք երաժշտական գործիք՝ քանոն, ջութակ, շվի:

Մարտի 23-ին եւ 24-ին Կապանի արվեստի մանկական դպրոցի երեք սան մայրաքաղաքում մասնակցել է «Արտ մյուզիք» արվեստի իններորդ միջազգային մրցույթ-փառատոնին՝ Շուշան Վեզիրյանը՝ ասմունք (դասատու՝ Արթուր Գաբրիելյան), Ինեսա Ադամյանը եւ Սվետլանա Առաքելյանը՝ քանոն անվանակարգերում (դասատու՝ Թամարա Հայրումյան)՝ արժանանալով երկրորդ եւ երրորդ մրցանակների:

Մրցույթ-փառատոնին նկարչության անվանակարգում ներկայացված էին արվեստի մանկական դպրոցի չորս սանի երկուական գունանկարները (դասատու՝ Բորիկ Միհասյան): Նրանք նույնպես արժանացան երկրորդ եւ երրորդ մրցանակների:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Բեմահարթակում կապանցի սփեղծագործողներն էին

Կանանց միամսյակի շրջանակում Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում մարտի 20-ին տեղի ունեցավ «Մեր տունը, մեր հունը…» խորագրով երեկո: Միջոցառման նախաձեռնող՝ Կապանի համայնքապետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի բաժնի առաջատար մասնագետ Նարա Մելքումյանը հենց սկզբում տեղեկացրեց, որ այն գնահատանքի երեկո է՝ հիշելու եւ արժեւորելու կապանցի ստեղծագործողներին: Երեկոն բացվեց քաղաքի օրհներգով (հեղինակ՝ Գառնիկ Խաչատրյան): Բեմահարթակից հնչեցին Գագիկ Դավթյանի եւ Վաչե Եփրեմյանի բանաստեղծությունները (ասմունքողներ՝ Էդիտա Դավթյան, Նորիկ Սահակյան, Նարեկ Գաբրիելյան): Էկրանին սահում էին Ավագ Եփրեմյանի բանաստեղծությունների տողերը: Բեմահարթակից հնչող երաժշտական ստեղծագործությունների եւ կատարումների հեղինակները կապանցի էին:Կապանի արվեստի պետական քոլեջի երկրորդ կուրսի սովորող Միեր Ամիրջանյանը N1 երաժշտական դպրոցի դիոլահարների անսամբլի նվագակցությամբ շվիով հնչեցրեց Գառնիկ Խաչատրյանի «Պար» ստեղծագործությունը: Կապանի N2 երաժշտական դպրոցի նվագախումբը (ղեկավար Արթուր Մովսիսյան) կատարեց Սասուն Առաքելյանի «Ալպիական հիմ կակաչ» ստեղծագործությունը:

Կապանի N3 երաժշտական դպրոցի սան Լիանա Հարությունյանը սահմանափակ կարողություններ ունի, ի ծնե բացակայում է լսողությունը, խոսքի խանգարումներ ունի: Չնայած այս ամենին՝ աղջնակը սովորել է ջութակ նվագել: Ջութակի իր դասատու Լիաննա Սողոմոնյանի հետ կատարեց կապանցի կոմպոզիտոր Վահան Մանուկյանի «Գետակը» ստեղծագործությունը: Ստեղծագործող Շուշանիկ Գեւորգյանի գործը հնչեցրին Մելինե Խաչատրյանը, Լիաննա Սողոմոնյանը եւ հեղինակը: Շուշանիկի եւ N3 երաժշտական դպրոցի դասատու Էդգար Ստեփանյանի կատարմամբ հնչեց նրա «Տանգո» ստեղծագործությունը: Սերժ Բալայանի «Հայուհի գեղեցիկ» երգը կատարեց Գաբրիելը: Իսկ Գագիկ Գրիգորյանը եւ Արթուր Դավթյանը հանդես եկան սեփական երգերի կատարմամբ:

Դահլիճի ճեմասրահում ներկայացված էին Կապանի արվեստի, Կապանի արվեստի մանկական դպրոցի սաների գեղանկարչական աշխատանքները: Կապանի արվեստի պետական քոլեջի 14 սովորող ցուցադրանքին ներկայացել էր 21 աշխատանքով՝ գոբելեն, կոմպոզիցիա, գունանկար:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
21 մարտի 2018

Շնորհակալ եմ, որ կաք ու բազում ընտանիքներ եք երջանկացնում

Սյունյաց աշխարհը միշտ էլ աչքի է ընկել մեծաշնորհ զավակներով՝ հերոսներով, մտավորականներով, բժիշկներով, այլ բնագավառի նվիրյալներով… Ու նաեւ սյունեցիներիս խորք չէ երախտագիտության զգացումն արժանավորների նկատմամբ:

Ուզում եմ բազում կապանցիների հոգում ամբարված շնորհակալությունն ու հիացումը հայտնել Հիպոկրատի արժանի եւ հավատարիմ երդվյալ, ակնածելի բժշկուհի, Կապան քաղաքի բնակիչ Կարմելա Հարությունյանին:

Ինձ թույլ չեմ տա արժեւորել նրա մասնագիտական ակնհայտ հմտությունները. դա քննարկման ենթակա չէ, բայց արժե շեշտադրել նրա մարդկային որակն ու լուսավոր կերպարը: Հոգատար, բարեհամբույր, սրտացավ, արեւշատ, իր հանգստի սակավ ժամերն անտրտունջ նվիրող դրա կարիքն ունեցողին… Բառաշարքը կարելի է համալրել համարժեքներով, բայց զգացածս ամբողջապես նկարագրել չեմ կարող նաեւ գնահատանքի խոսքերով:

Շնորհակալ եմ, որ կաք, որ բազում ընտանիքներ եք երջանկացնում Ձեր օրհնյալ ձեռքերի ու կարողությունների շնորհիվ:

Աստված օրհնի այդօրինակ բոլոր բժիշկներին:

Մեր առողջապահության համակարգում թող լինեն այդպիսիք:

ՀԱՍՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

«Սյունյաց երկիր» թերթի տարեկան հաշվետվությունը

Համաձայն «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի՝ ներկայացնում ենք «Սյունյաց երկիր» թերթի 2017թ. ֆինանսական հաշվետվությունը (դրամով):

Համախառն եկամուտ՝……..20 943 004

Այդ թվում՝……

Նվիրատվություն՝……..0

Սուբսիդիա՝……500 000

Գովազդ (առանց ԱԱՀ-ի)՝……4 244 000

Հյուր էր «Միեր Մկրտչյան» արտիստական թատրոնը

Մարտի 20-ին կապանցի թատերասերների հյուրն էր Երեւանի քաղաքապետարանի «Միեր Մկրտչյան» արտիստական թատրոնը: Վաստակաշատ ռեժիսոր Ալբերտ Մկրտչյանի մահվանից հետո թատրոնի գեղարվեստական ղեկավարի պաշտոնը ստանձնել է որդին՝ Միեր Մկրտչյանը: Ինչպես տեղեկացրեց թատրոնի տնօրեն էդգար Բադալյանը, իրենք չեն սահմանափակվում միայն Երեւանով. **«Ալբերտ Մկրտչյանն ասում էր, որ «Միեր Մկրտչյան» թատրոնը միայն Երեւանինը եւ երեւանցունը չէ, այն ամբողջ հայ ազգինն է: Ավանդույթ ենք դարձրել, երբ եղանակները փոքր-ինչ տաքանում են, բեմադրություններով հանդես ենք գալիս մարզերում, այցելում ենք նաեւ հայոց բանակի զորամասեր»:** Կապայան բեմում մայրաքաղաքային թատրոնը ներկայացրեց ֆրանսիացի դրամատուրգ Ռեյ Կունիի «Վատ տղաներ» (ըստ հեղինակի՝ «Թոմը, Դիքը եւ Հարին») կատակերգությունը (բեմադրությունը՝ Արթուր Սահրիբեկյանի): Հանդիսականը ջերմությամբ ընդունեց բեմադրությունը, ինչի վկայությունը երկարատեւ ծափահարություններն էին:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1210, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 30.03.2018թ.: